

Maner hill

Ապրիլ 3, 1952

Հոգեշնորհ
Տ.Հմայեակ վրդ. Ինթոյեան
Հոգեւոր հովիւ Ս.Խաչ Եկեղեցւոյ
Եւ նախագահ պատ. հոգաբարձութեան
Լորէնս,

Սիրելի Տ.Հմայեակ,

Ստացած ենք Ձեր փետրուար 14 թուակիր նամակը ի
մասին Ձեր հովուական պաշտօնի փոփոխութեան:

Անցնող չորս տարիներու ընթացքին Դուք ջանադիր
եղաք կազմակերպելու Հէյվըրհիլի եւ Լորէնսի մեր զոյգ համայնք-
ները: Ասոնք այժմ կը գտնուին ըստ ամենայնի զոհացուցիչ եւ կա-
նոնաւոր ընթացքի մը մէջ: Երկու համայնքներն ալ յայտնած են
իրենց գնահատանքը Ձեր մասին:

Ներկայիս անհրաժեշտ է որ Դուք նոյն եռանդով ջա-
նաք կազմակերպել մեր թեմի կարեւոր համայնքներէն եղող Եռենիլըն
Սիթիի ծուխը: Ուստի զԶեզ կը նշանակենք Հովիւ Եռենիլըն Սիթիի Ս.
Խաչ Եկեղեցւոյ, տարւոյս Ապրիլ 27-ի Կիրակիէն սկսեալ:

Լորէնսի Ս.Խաչ Եկեղեցւոյ հովուական պաշտօնին հա-
մար պատշաճ կարգադրութիւն մը պիտի կատարենք մօտիկ ապագային:

Հայցելով Աստուծոյ օրհնութիւնը ձեր ջանքերուն համար,

Մնամք ողջունել սիրոյ
Աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամերիկայի

Ապրիլ 3, 1952

Հոգեշնորհ
Տ. Հմայեակ վրդ. Ինթոյեան
Հոգեւոր հովիւ Ս. Գր. Լուս. Եկեղեցւոյ
Եւ նախագահ պատ. հոգաբարձութեան
Հէյվըրհիլ,

Սիրելի Հայր Հմայեակ,

Ստացած ենք Ձեր փետրուար 14 թուակիր նամակը ի
մասին Ձեր հովուական պաշտօնի փոփոխութեան:

Անցնող չերս տարիներու ընթացքին Դուք ջանադիր
եղաք կազմակերպելու Հէյվըրհիլի եւ Լօրէնսի մեր զոյգ համայնք-
ները: Ասոնք այժմ կը գտնուին ըստ ամենայնի զոհացուցիչ եւ կա-
նոնաւոր ընթացքի մը մէջ: Երկու համայնքներն ալ յայտնած են
իրենց գնահատանքը Ձեր մասին:

Ներկայիս անհրաժեշտ է որ Դուք նոյն եռանդով ջա-
նաք կազմակերպել մեր թեմի կարեւոր համայնքներէն եղող Եուներն
Սիթիի ծուխը: Ուստի գտե՛ք կը նշանակենք Հովիւ Եուներն Սիթիի
Ս. Խաչ Եկեղեցւոյ, Ապրիլ 27, 1952, Կիրակիէն սկսեալ:

Հէյվըրհիլի Ս. Գր. Լուս. Եկեղեցւոյ առժամեայ հոգեւոր
հովիւ կը նշանակենք Հոգ. Տ. Հրանդ Աբղ. Խաչատուրեանը որ ձեզի հետ
պիտի ըլլայ Ապրիլ 6-էն սկսեալ, եւ պիտի հովուէ Հէյվըրհիլի մեր
համայնքը Ապրիլ 21-էն սկսեալ: Պատշաճ եղանակաւ զինք ներկայացու-
ցէ՛ք հոգաբարձութեան եւ ծխականներուն առ հասարակ, իր բնակութեան եւ
թոշակին վերաբերեալ անհրաժեշտ կարգադրութիւններն ալ կատարելով:

Հայցելով Աստուծոյ օրհնութիւնը ձեր ջանքերուն համար,

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամերիկայի

Ապրիլ 3, 1952

Հոգեշնորհ
Տ.Հմայեակ Վրդ. Ինթոյեան
Հոգեւոր հովիւ Հէյվըրհիլի եւ Ղոէնսի
Հայց. Եկեղեցիներուն
Հէյվըրհիլ

Սիրելի Հ.Հմայեակ,

Մեր թեմի կարեւոր համայնքներէն Եռւնիըն Սիթիի
Ս.Խաչ Եկեղեցին ամիսներէ ի վեր չունի իր հովիւը: Անհրաժեշտ է որ
այդ համայնքը կազմակերպուի որպէսզի մեր սուրբ եկեղեցին ի վի-
ճակի դառնայ հոգեւոր սնունդ մատակարարելու իր զաւակներուն:

Ուստի զԶեզ ազատ կը կացուցանենք Հէյվըրհիլի եւ
Ղոէնսի զոյգ համայնքներու հովուական պաշտօնէն, եւ կը նշանակենք
զԶեզ հոգեւոր հովիւ Եռւնիըն Սիթիի Ս.Խաչ Եկեղեցւոյ, տարւոյս
Ապրիլ 27-ի Կիրակիէն սկսեալ: Հէյվըրհիլի համայնքի հովուութիւնը
պիտի կատարէ Հոգշ. Տ.Հրանդ Արդ. Խաչատուրեանը, որուն բնակութեան
եւ թոշակի վերաբերմամբ հարկ եղած կարգադրութիւնները կը կատարէք
ըստ պատշաճի, եւ Ապրիլ 21-էն ետքը կը փոխադրուիք Եռւնիըն Սիթի:

Մաղթելով Զեզ կարողութիւն ի Տեսունէ,

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց Ամերիկայի

Ապրիլ 3, 1952

Հոգեւոր
Տ. Հմայեակ վրդ. Ինթոյեան
Նախագահ պատ. հոգաբարձութեանց
Հէյվըրհիլի եւ Լորէնսի համայնքներուն,

Սիրելի Տ. Հմայեակ,

Ձեր հովուական պաշտօնի փոփոխութեան կապակցութեամբ
անհրաժեշտ կը նկատենք յիշեցնել թէ՛ Ձեր մեկնումէն առաջ պարտաւոր
էք Ձեր հովուած զոյգ համայնքներուն Հոգեւորականաց Հիմնադրամի
յետնեալ հաշիւները, 1949-էն սկսեալ, ճշդել եւ վճարումները կատարել
տալ:

Դարձեալ, կը յանձնարարենք նաեւ յիշեցնել հոգաբար-
ձութեանց Գանձապահներուն թէ՛ համաձայն կանոնադրի, իրենց պարտակա-
նութիւնն է հովուի թոշակ վճարելու պարագային, սահմանուած տոկոսը
քննել եւ նոյնքան ալ եկեղեցւոյ սնտուկէն միացնելով պարբերաբար
ուղարկել Առաջնորդարան:

Հաճեցէք պատշաճ կարեւորութեամբ վերոյիշեալ երկու
կէտերուն ընթացք տալ:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից

Փոխանորդ Առաջնորդի Հայոց
Ամերիկայի